# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ
# ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատի, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 42

### ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> 2002թվականի հունիսի 21-ի համար ՀՕ-337 օրենքի 14-րդ հոդվածով

1. Արարատ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը և Արարատի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին,
2. <<Արարատ գյուղի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին,
3. <<Արարատ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին,
4. Հարկային արտոնություն տրամադրելու մասին,
5. Բյուջեի փոփոխության մասին,
6. 2018թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի և տեսակների հաստատման մասին,
7. Հողամասի օտարման մասին,
8. Արարատ համայնքի ոռոգման համակարգի ներտնտեսային ցանցի արդիականացման ծրագիրն իրականացնելու մասին,
9. Սուրբ Զորավար եկեղեցու շինարարությանն աջակցելու համար ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** **ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատ, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 43

### ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» 2001թվականի հունիսի 21-ի համար ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 28- րդ կետով, ավագանին որոշեց.

*Հաստատել 2019թ համար Արարատ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի /հավելվածը կցվում է/:*

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** **ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

*Հավելված թիվ 1*

*Արարատ համայնքի ավագանու 2018թ նոյեմբերի 27-ի թիվ 43-Ն որոշման*

*/բաղկացած է 1 թերթից/*

*2019թ համար Արարատ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի, պաշտոնային դրույքաչափերի մասին*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ – 380000 դրամ*

1. *աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 13*
2. *աշխատակիցների թվաքանակը, պաշտոնային դրույքաչափերը՝*

| N | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքի միավորը | ՊԱՇՏ. ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|---|---|---|---|
| | *Հայեցողական պաշտոններ* | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | **230000** |
| | **Ընդամենը** | **1** | **230000** |
| | *Համայնքային ծառայության պաշտոններ* | | |
| 2 | Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/1.2-1/ | 1 | **290000** |
| 3 | Համայնքապետարանի աշխ.-ի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | **220000** |
| 4 | Համայնքապետարանի աշխ.-ի գլխավոր մասնագետ /2.3-2/ | 1 | **220000** |
| 5 | Համայնքապետարանի աշխ.-ի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | **180000** |
| 6 | Համայնքապետարանի աշխ.-ի առաջատար մասնագետ /3.1-2/ | 1 | **180000** |
| 7 | Համայնքապետարանի աշխ.-ի առաջին կարգի մասնագետ/3.2-2 | 1 | **160000** |
| | | | |
| | **Ընդամենը** | **6** | **1250000** |
| | *Տեխնիկական աշխատողներ* | | |
| 8 | Հարկահավաք | 1 | 140000 |
| 9 | Գործավար օպերատոր | 1 | 125000 |
| 10 | Վարորդ | 1 | 135000 |
| 11 | Ավտոբուսի վարորդ | 1 | 150000 |
| 12 | Էլեկտրիկ | 1 | 90000 |
| 13 | Հավաքարար | 1 | 90000 |
| | **Ընդամենը** | **6** | **730000** |
| | **Ընդամենը** | 14 | 2590000 |

Աշխատակազմի քարտուղար Արմինա Մելոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատ, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 44

## «ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ՔԱՆԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» 2001թվականի հունիսի 21-ի համար ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 28- րդ կետով, ավագանին որոշեց.

2019 թվականի համար հաստատել «Արարատ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակը, քանակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի /հավելվածը կցվում է/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

Համայնքի ղեկավար՝ ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

*Հավելված թիվ 1*

*Արարատ համայնքի ավագանու 2018թ նոյեմբերի. 27ի թիվ 44 որոշման*

*/բաղկացած է 1 թերթից/*

*2019թվականի համար <<Արարատ գյուղի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը*

1. Աշխատակիցների քանակը՝ 41 հոգի

2.ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային միավորը | Աշխ.-ի թվաքանակը | Մեկ միավորի դրույքաչափը | Ամսեկան աշխատավարձը հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 180000 | 180000 |
| 2 | Մանկավարժ- մեթոդիստ | 1 | 1 | 150000 | 150000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 1 | 140000 | 140000 |
| 4 | Դաստիարակ | 8.75 | 14 | 140000 | 1225000 |
| 5 | Դաշնակահար | 1.75 | 2 | 130000 | 227500 |
| 6. | Բուժքույր | 1 | 1 | 115000 | 115000 |
| 7 | Ֆիզ.հրահանգիչ | 1 | 1 | 100000 | 100000 |
| 8 | Հոգեբան | 1 | 1 | 100000 | 100000 |
| 9 | Հաշվետար- գանձապահ | 1 | 1 | 88000 | 88000 |
| 10 | Գործավար | 1 | 1 | 88000 | 88000 |
| 11 | Դաստիարակի օգնական | 7.7 | 7 | 85000 | 654500 |
| 12 | Տնտեսվար | 1 | 1 | 83000 | 83000 |
| 13 | Խոհարար | 1 | 1 | 88000 | 88000 |
| 14 | Խոհարարի օգնական | 2 | 2 | 83000 | 166000 |
| 15 | Լվացարար | 1 | 1 | 85000 | 85000 |
| 16 | Սարքեր-սարքավորումներ նորոգող վարպետ | 1 | 1 | 105000 | 105000 |
| 17 | Հավաքարար | 1 | 1 | 83000 | 83000 |
| 18 | Դռնապան հավաքարար | 1 | 1 | 85000 | 85000 |
| 19 | Այգեպան | 1 | 1 | 85000 | 85000 |
| 20 | Պահակ | 1.5 | 1 | 78000 | 117000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 3965000 |

**Աշխատակազմի քարտուղար՝** **Արմինա Մելոյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատի, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 45

## ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԻ «ԱՐԱՐԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ՔԱՆԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» 2001թվականի հունիսի 21-ի համար ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 28- րդ կետով , ավագանին որոշեց.

2019 թվականի համար հաստատել «ԱՐԱՐԱՏ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի աշխատավարձի չափը, աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի /հավելվածը կցվում է/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

*Հավելված թիվ 1*

*Արարատ համայնքի ավագանու 2018թ նոյեմբերի. 27 ի թիվ 45 որոշման*

*/բաղկացած է 1 թերթից/*

*2019 թվականի համար Արարատ գյուղի « ԱՐԱՐԱՏ » ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը*

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 26
2. ՀՈԱԿ-ի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային միավորը | Մեկ միավորի դրույքաչափը | Ամսական աշխատավարձը հզր․ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | «Արարատ» ՀՈԱԿ-ի տնօրեն | 1 | 210000 | 210000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 140000 | 140000 |
| 3 | Մշակույթի տան պատասխանատու | 1 | 110000 | 110000 |
| 4 | Վարձավճար հավաքող | 1 | 105000 | 105000 |
| 5 | Գրադարանի վարիչ | 1 | 92000 | 92000 |
| 6 | Գրադարանավար | 2 | 89000 | 178000 |
| 7 | Երաժշտական տեխնիկայի պատասխանատու | 1 | 89000 | 89000 |
| 8 | Պարուսույց | 1 | 79000 | 79000 |
| 9 | Սպորտ մեթոդիստ | 1 | 100000 | 100000 |
| 10 | Սպորտ մարզիչներ | 4 | 90000 | 360000 |
| 11 | Աղբատար մեքենայի վարորդ | 2 | 110000 | 220000 |
| 12 | Օժանդակ բանվոր /աղբահավաք/ | 2 | 94000 | 188000 |
| 13 | Հակակարկտային կայանի պահակ | 2 | 79000 | 158000 |
| 14 | Հուշահամալիրի պատասխանատու | 1 | 120000 | 120000 |
| 15 | Մշակույթի տան հավաքարար | 1 | 75000 | 75000 |
| 16 | Հուշահամալիրի այգեպան /8 ամիս / | 1 | 75000 | 75000 |
| 17 | Մշակույթի տան և հուշահամալիրի պահակ | 1 | 75000 | 75000 |
| 18 | Փողոցների հավաքարար | 1 | 85000 | 85000 |
| 19 | Հուշահամալիրի հավաքարար /8ամիս / | 1 | 75000 | 75000 |
|  | Ընդամենը | 26 | 1892000 | 2534000 |

**Աշխատակազմի քարտուղար՝** **Արմինա Մելոյան**

ԱՐԱՐԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՎՀՀ 04101124

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատի, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 46

## ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին » 1994թվականի մայիսի 8-ի համար ՀՕ-101 օրենքի 10-րդ հոդվածով և Հայաստանի հանրապետության կառավարության կողմից հաստատված «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու» կարգով, **ավագանին որոշեց.**

Արարատ գյուղի ներքոհիշյալ բնակիչներին տրամադրել հարկային արտոնություն հողի հարկի գծով համաձայն հավելվածի, հավելվածը կցվում է:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** **ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

հավելված 1

Արարատ համայնքի ավագանու 2018թվականի թիվ 46-Ն որոշման

# Հարկային արտոնություն ստացողների

# Ցուցակ

# Հողի հարկի գծով

| N | Հողամասի սեփականատեր անուն,ազգանուն | Հողատեսքը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի չափը ( հա) | Զիջման չափը | Մուծում | Ապառք | Ընթացիկ տարին |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ապրես Սիրեկանյան | Խաղողի այգի<br>Խաղողի այգի | 302-012<br>301-012 | 0,268<br>0,374 | 7931<br>11,069 | 62700 | 0 | 2018թ |
| 2. | Ռազմիկ Խաչատրյան | Վարելահող<br>Վարելահող<br>Վարելահող<br>Վարելահող | 376-004<br>331-003<br>376-005<br>377-005 | 0,277<br>0,491<br>0,134<br>0,145 | 5061<br>13198<br>2448<br>2649 | 50000 | 166400 | 2018թ |
| 3. | Մրազ Հասանյան | Վարելահող | 209-048 | 0,52 | 9500 | 25800 | 0 | 2018թ |
| 4. | Կարեն Բալայան | Խաղողի այգի<br>Վարելահող<br>վաելահող | 418-004<br>418-004<br>411-002 | 0,022<br>0,061<br>0,272 | 3749<br>738<br>3293 | 4650 | 0 | 2018թ |
| 5. | Ղարիբ Մինասյան | Խաղողի այգի<br>Կորիզավոր այգի | 312-027<br>312-027 | 0,35<br>0,31 | 10358<br>8631 | 81400 | 3200 | 2018թ |
| 6 | Օղիկյան Խաթուն | տնամերձ | 079-014 | 0.094 | 1300 | 0 | 0 | 2018թ |
| 7 | Հակոբյան Էմմա | տնամերձ | 057-035 | 0.05 | 692 | 0 | 0 | 2018թ |
| 8 | Շահբազյան Արամ | Վարելահող<br>տնամերձ | 441-002<br>126-013 | 0.554<br>0.21 | 6706<br>2904 | 0 | 0 | 2018թ |
| 9 | Մաթևոսյան Ռազմիկ | Վարելահող<br>տնամերձ | 210-34<br>015-020 | 0.74<br>0.099 | 13520<br>1369 | 0 | 0 | 2018թ |
| 10 | Նադարյան Արմանուշ | Վարելահող<br>Վարելահող<br>տնամերձ | 306-017<br>308-017<br>006-004 | 0.304<br>0.177<br>0.088 | 5554<br>3234<br>1217 | 0 | 0 | 2018թ |
| 11 | Նադարյան Ջիվան | Վարելահող<br>Վարելահող<br>տնամերձ | 308-016<br>306-016<br>009-012 | 0.194<br>0.273<br>0.153 | 3544<br>4988<br>2116 | 0 | 0 | 2018թ |
| 12 | Մելիքյան Սուսաննա | Տնամերձ<br>Վարելահող | 094-004<br>327-002 | 0.091<br>0.603 | 1259<br>16209 | 0 | 0 | 2018թ |
| 13 | Մելիքյան Մանուկ | Վարելահող<br>Վարելահող | 320-009<br>077-014 | 0.584<br>0.097 | 10670<br>1342 | 0 | 0 | 2018թ |
| 14 | Փանոսյան Ալմաստ | Վարելահող | 321-038 | 0.733 | 13392 | 0 | 0 | 2018թ |
| 15 | Առուստամյան Սոֆյա | Վարելահող | 139-021 | 0.082 | 1134 | 0 | 0 | 2018թ |
| 16 | Ասլանյան Խաչատուր | Վարելահող<br>Տնամերձ | 359-004<br>135-005 | 0.458<br>0.0997 | 8368<br>1342 | 0 | 0 | 2018թ |
| 17 | Կոստանյան Լիա | Վարելահող<br>Տնամերձ | 327-003<br>058-026 | 0.282<br>0.152 | 7580<br>2102 | 0 | 0 | 2018թ |
| 18 | Վոլոդյա կարապետյան | Խաղողի այգի<br>Վարելահող<br>վարելահող | 498-021<br>499-021<br>500-021 | 0,091<br>0,085<br>0,081 | 1380<br>1029<br>1102 | 23400 | 0 | 2018թ |
| 19 | Թամարա Հարությունյան | Վարելահող<br>Վարելահող | 400-026<br>218-021 | 0,709<br>0,733 | 8582<br>13392 | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Վարելահող | 218-020 | 0,039 | 7125 | 52200 | 0 | 2018թ |
| 20 | Անահիտ Նիկողոսյան | Խաղողի այգի | 323-001 | 0,457 | 22430 | 40200 | 0 | 2018թ |
| 21 | Անահիտ Օհանյան | Վարելահող | 210-015 | 0,26 | 4750 | 0 | 0 | 2018թ |
| 22 | Վանիկ Մալխասյան | Վարելահող | 310-003 | 0,531 | 9701 | 0 | 0 | 2018թ |
| 23 | Աթոյան Գուրգեն | Տնամերձ<br>Տնամերձ | 400-008<br>136-012 | 0,469<br>0,114 | 5618<br>1577 | 0 | 0 | 2018թ |
| 24 | Հռիփսիկ Ադամյան | Տնամերձ<br>Վարելահող | 107-020<br>491-002 | 0,194<br>0,503 | 7334<br>18851 | 0 | 0 | 2018թ |
| 25 | Նարինե Պետրոսյան | Վարելահող | 210-030 | 0,583 | 10651 | 0 | 93215 | 2018թ |
| 26 | <<ԼԱՎԱՇ-ԺՈՐԱ>>ԱԿ | արտադրական | 0025-0055 | 1,641 | 12688 | 89500 | 0 | 2018 |
| | **Ընդամենը՝** | | | | **315377** | **429850** | **113055** | |

## Գույքահարկի գծով

| N | **Գույքի սեփականատեր Անուն,ազգանուն** | **Գույքային միավորը** | **Զիջում** | **մուծում** | **ապառք** |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ղուկասյան Սեդրակ | Ավտոմեքենա BMW 745I 17OQ777 | 174750 | 0 | 495390 |
| 2 | Մստոյան Ահմադ Շ | Անհատական տուն Կ.Փանոսյան 48 | 14193 | 40500 | 95116 |
| 3 | Ստամբոլցյան Երջանիկ | Ավտոմեքենա GAZ-24 35LT943 | 8500 | 12000 | 12146 |
| 4 | <<ԼԱՎԱՇ-ԺՈՐԱ>>ԱԿ | Շինություն հացաբուլկեղենի արտադրամաս Գրիբոյեդովի 125 | 35314 | 48961 | 200000 |
| | **Ընդամենը՝** | | **197443** | **40500** | **614652** |

### Նորատունկ այգիների համար հողի հարկի արտոնություն ստացողների ցուցակ

| N | Հողամասի սեփականատեր անուն,ազգանուն | Հողատեսքը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի չափը( հա) | Տրամ.արտոնութ. ժամկետը | Հիմնման տարեթիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սարգիս Վարդազարյան | Խաղողի այգի<br>Խաղողի այգի | 0329-0004<br>0325-0004 | 0,129 հա<br>0,92 հա | 3 տարի | 2018 թ |

**Աշխատակազմի քարտուղար** **Արմինա Մելոյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատ, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 47

## ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման Մասին>> 2002թվականի հունիսի 21-ի համար ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին >> 1997թ օգոստոսի 21 – ի համար ՀՕ-137 օրենքի 33- րդ հոդվածի 4-րդ կետով, **ավագանին որոշեց.**

Պակասեցնել –Ընդհանուր բնույթի այլ տնտեսական 04.01.01.55 ծախսային ծրագրի 4657 այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածից 30000000դրամ, հասարակական կազմակերպություններին աջակցություն 10.04.01.55 ծախսային ծրագրի 4819 նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին հոդվածից 500000 դրամ ավելացնել .

Ուսանողական ավտոբուսի դիզվառելիքը ապահովելու համար նույն ծախսային ծրագրի 4264 տրանսպորտային նյութեր հոդվածին 1000000 հաստատելով 2700000դրամ, Ամանորյա տոնակատարություններ անցկացնելու համար 08.05.01.55 հանգիստ մշակույթ կրոն ծախսային ծրագրի 4239 ընդհամուր բնույթի այլ ծառայություններ հոդվածին 1000000դրամ՝ հաստատելով հոդվածը 7000000դրամ:

Սոցիալապես անապահով ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին օգնելու համար 10.07.01.54 սոցիալական անապահով ընտանիքներին օգնություն ծախսային ծրագրի 4729 այլ նպաստներ բյուջեից հոդվածին 1000000դրամ հաստատելով հոդվածը 4.700.000դրամ:

Գյուղի մի շարք փողոցներում ցերեկային լուսավորություն անցկացնելու համար 06.04.01.56 փողոցների լուսավորում ծախսային ծրագրի 4251 ընթացիկ նորոգում հոդվածին 500.000դրամ հաստատելով հոդվածը 2800000դրամ:

Համանքապետարանի վարչական շենքի համար նոր տեսախցիկներ ձեռք բերելու համար ֆոնդային բյուջեի 11.01.02.52 պահուստից պակասեցնել 250.000դրամ , ավելացնել կառավարման մարմնի պահպանման 5122 վարչական սարքավորումներ հոդվածին հաստատելով հոդվածը 750000դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** **ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատի, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 48-Ն

## 2019Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» 2001 թվականի հունիսի 21ի համար ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 18 և 19-րդ կետով

2019թ Արարատի համայնքի համար հաստատել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը համաձայն հավելվածի, հավելվածը կցվում է.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** **ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված

Արարատ համայնքի ավագանու

2018թ նոյեմբերի 27-ի թիվ 48-Ն որոշման

# 2019թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

## 1. Համայնքի տարածքում տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500դրամ

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000դրամ
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000դրամ
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000դրամ
- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ .50000դրամ

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500դրամ
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500դրամ

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000դրամ

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով

օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 5000դրամ

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, տեխնիկական հեղուկների մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ 200000դրամ

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2400դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13060դրամ
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3960դրամ
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6060դրամ
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7560.դրամ
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13560դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2400դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3060 դրամ

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3960դրամ

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6060դրամ

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7560դրամ .

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13560դրամ

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ . 50000դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100.000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 500000դրամ

դ. խաղատների համար՝ 1000000դրամ

ե. շահումով խաղերի համար՝ 250000դրամ

զ. վիճակախաղերի համար՝ 150000դրամ

10) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000դրամ

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000դրամ

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 18000դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500դրամ

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000դրամ

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500դրամ

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերեպ ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10000դրամ

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝1500դրամ

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 դրամ,.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 150դրամ:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝10000 դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝500000 դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝5000000 դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:

1. Օրացուցային տարվա համար ավագանու կողմից սահմանված տեղական վճարների դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել:

16) Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվություն համար ՝ օրացուցային տարվա համար 50000դրամ,

17) Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար.

ա. կարաոկեի, դիսկոտեկի , բաղնիքի, սաունա և շոգեբաղնիքի համար ՝ օրացուցային տարվա համար 10000դրամ

բ. հեստապարային ակումբի համար ՝օրացուցային տարվա համար 100000դրամ

## 2. Համայնքի տարածքում տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 10000դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 5.000դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 5000 դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.5000դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 5.000դրամ:

6) **Աղբի տարբեր տեսակների համար սահմանվում է տարբեր դրույքաչափեր.**

1. համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը ամսեկան մեկ բնակչի համար 100դրամ ,

2. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

**ա**. ըստ ծավալի 1 խմ-ի համար - 1000դրամ,

**բ.** ըստ զանգվածի 1 տ-ի համար - 8000դրամ:

**գ.** առևտրի, հանրային սննդի,հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության և սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝

- մինչև 25քմ մակերեսի համար ամսական, 0.25խմ կենցաղային աղբ կամ 250 դրամ,
- 26-50քմ մակերեսի համար ամսական, 0. 5խմ կենցաղային աղբ կամ 500 դրամ,
- 50-100քմ մակերեսի համար ամսական, 0. 75խմ կենցաղային աղբ կամ 750 դրամ,
- 100քմ և ավել մակերեսի համար ամսական, 1խմ կենցաղային աղբ կամ 1000 դրամ:

**դ.** արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝

- մինչև 500քմ մակերեսի համար ամսական, 1խմ կենցաղային աղբ կամ 1000 դրամ,
- 500-1000քմ մակերեսի համար ամսական, 2խմ կենցաղային աղբ կամ 2000 դրամ,
- 1000քմ և ավել մակերեսի համար ամսական, 5խմ կենցաղային աղբ կամ 5000 դրամ

**ե.** կրթական, մշակութային,առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով.

- մինչև 500քմ մակերեսի համար ամսական, 1խմ կենցաղային աղբ կամ 1000 դրամ,
- 500-1000քմ մակերեսի համար ամսական, 2խմ կենցաղային աղբ կամ 2000 դրամ,

- 1000քմ և ավել մակերեսի համար ամսական, 3խմ կենցաղային աղբ կամ 3000 դրամ:

**գ.** Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավել առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:

7) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով 5000դրամ,

8) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների /սպորտի, արվեստի խմբեր/ ծառայություններից օգտվողների համար, համայնքային ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ամսական 500 դրամ

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար 1000 դրամ փոխհատուցման վճար:

10) Համայնքն սպասարկող անասնաբուժական ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափի փոխհատուցման գումար սահմանել՝

1. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500դրամ,
2. Ծննդօգնություն՝
   ա. թեթևմիջամտություն 1000 դրամ,
   բ. ծանր միջամտություն 5000 դրամ,
3. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների) ՝ մանր եղջերավոր 100դրամ, խոշոր եղջերավոր 200 դրամ,
4. Կենդանիների արտաքին ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 դրամ,
5. Ախտահանություն՝ 1 քմ 200դրամ,
6. Միջատազերծում (դեզինսեկցիա)՝ 1 քմ 100դրամ
7. Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)՝ 1քմ 200 դրամ,
8. Արհեստական սերմնավորում՝ 5000 դրամ,
9. Կենդանու հերձում՝ մանր եղջերավոր 1000դրամ, խոշոր եղջերավոր 3000 դրամ,
10. Կենդանուբուժում՝ /կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից/ այցը 1000դրամ,
11. Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից ՝ մանր եղջերավոր 1000դրամ, խոշոր եղջերավոր 2000 դրամ,
12. Կենդանիների հետսպանդային զննում՝ մանր եղջերավոր 1000դրամ, խոշոր եղջերավոր 2000 դրամ:

Աշխատակազմի քարտուղար Ա. Մելոյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ
## ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատի, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 49

## ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> 2001 թվականի հունիսի 21-ի համար ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով , ավագանին որոշեց.

03-015-0079-0002 ծածկագիրը կրող գույքային միավորը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.0035 հա հողամասը /սեփ. վկայական N 25102018-03-0045 /տրամադրել օտարման, մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 % չափով :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** **ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ
# ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատի, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 50

### ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 25-րդ կետով, **ավագանին որոշեց**.

Առաջարկել Արարատ համայնքում ոռոգման համակարգի ներտնտեսային ցանցի արդիականացման հավանության արժանացած ծրագիրն իրականացնել բնակավայրի ներսում, բնակելի տնամերձ հողամասերը սպասարկող ցանցի համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** **ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատի, 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru /

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 51

### ՍԲ ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » 2001թվականի հունիսի 21-ի համար ՀՕ-337 օրենքի 18–րդ հոդվածի 6-րդ կետով, ավագանին որոշեց.

Արարատ համայնքի նոր կառուցվող Սուրբ Զորավար /Սարի սուրբ/ եկեղեցու կառուցապատման աշխատանքներին աջակցելու՝ շինանյութ ձեռք համար, բյուջեի ֆոնդային մասից մշակութային օբյեկտների հիմնանորոգում ծախսային ծրագրի 5113 շենք- շինությունների հիմնանորոգում հոդվածից հատկացնել 500.000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ